

Տարազը լոյս կ տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 5 կիրակի 4 փետրուարի | երկրորդ տարի 1896

ՁՆՈՐՀԱՒՈՐ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

ԱՐԲԻԿ

Բեկուչեան մութ խաւարին
Աստղիկ ցուրտը փչում էր.
Անօգնական մի որբ մանուկ,
Դողդոջալով կանչում էր.

«Ողոմեցէք, ով պարոնները,
Տկլոր, քաղցած մանուկին.
Ո՜հ, անխնամ խեղճ որբիկ
Աղերսում էր անցնողին։

«Չունիմ ոչ հայր, ոչ քոյր, ոչ մայր,
Որ խնամեն ամեն օր.
Ոչ ապրանք և ոչ եղբայր,
Տէր իմ Աստուած, գօրաւոր»։

«Երեք օր է պատէ ի պատ
Պաղատում եմ, ողբում,
Կատր Հացիկ ես միշտ կարօտ,
Որբիս ձայնը չեն լսում»։

«Ոտաբոբիկ, տկլոր, սոված
Թափառում եմ անտէրունչ,
Ինձ ազատիր, ով Տէր Աստուած,
Ջեզ վառք կըտամ անտրտունջ»։

—«Ո՜հ, ի՜նչ ձայն է, դառն մեղեդի»,
Ասաց մի կին ամուսնուն.
«Արի՛, արի՛ որբիկ-որդի,
Երթանք կամայ գէալի տուն»։

Դողդոջալով կամաց-կամայ
Ուճ վողոջով շուտ անցան.
Կինը նրան կերակրեց,
Խօսքը դարձուց նա նրան.

—«Ո՞ւմ որդին ես և ո՞ր երկրից,
Ասա, հոգիս, իմ որդեակ.
Մի վրդովվիր իմ խօսքերից,
Պատմիր հանգիստ, իմ հոգեակ»։

Չառաչանքով հոգւոց հանեց
Արտասւախառն աչօք լի.
—«Ինչ էլ կուզես, ես կըպատմեմ,
Ա՜խ իմ, մայրիկ սիրելի»։

«Մեր երկիրն է զարմանալի,
Ուր օդն է զով, ջուրն անուշ,
Կարկաչելով սարէ ի սար,
Համբոյր կըտան քաղցրանոյշ»։

«Ուր զովաշատ պաղ եղանակը
Ծաղկանց կըփարեն անընդհատ,
Ուր երգ թռչնոց են գալարիկ,
Գաղբէ կիջնէ միշտ առատ»։

«Ո՜, ինչ քաղցր և անուշ են
Լեռները, ձորեր ու դաշտեր,
Որոնց ծաղկանց ծոցերուն մէջ
Արածում են բիւր հօտեր»։

«Ի՜նչ նեղդաշնակ է ձայն քամու,
Տալով մարդուս կեանք մի նոր,
Հովիտք, անտառք, պաղ աղբիւրակք,
Ցիշեն դրախտ երկրաւոր»։

«Երկրագործը լծած դալթան
Կորդ դեաինը կըվարէ,
Մահկալ ձեռքին՝ իր գարկերը
Սարը հողին մէջ կըփարէ»։

«Տարիամ, մայրիկ, դէթ մի վայրկեան
Լսել երգը դեղջուկին,
Բնիկ հոգիս մէջը պատիած
Թող ատենեմ իմ հոգին»...

Ս. Ա.

ԹԷՈՓՈՐԱ *)

Այդ ահագին տարածութեան կենդրոնում, շրջապատուած անթիւ-անթիւ նստարաններով, որոնց վրայ բազմել էին հազարաւոր հանդիսականներ, ինչ էլին ներկայացնում այդ փոքրիկ երեխաները, ոչ աւելի քան հազիւ նշմարելի կէտեր։ Բազմաթիւ մարդկանցը լսուլ աղմուկը չէր կարող չըխլացնել մանկական ձայները։ Պատկերն էլին միայն ցոյց տալիս նրանց առաջարէգում երևալու նպատակը։

Պայրը և երեխաները ծնկաչոք ընկած էին՝ պատկները վեր բարձրացրած։

Այդ բազէին երեք աղջիկների հոգեկան տրամադրութիւնները այլատեսակ էին։ Փոքրիկ Անաստասիան ոչ մի բանի մասին չէր մտածում։ Նրա համար միևնոյն էր, գտնուում էր նա այստեղ, կըրկէսում, մարդկանցը անթիւ բազմութեան մէջ, թէ մի այլ տեղ։ Այն ամենը, ինչ որ նա տեսնում էր, բոլորովին տպաւորութիւն չէր թողնում նրա վրայ։

Պինձը—կամիտոնան, անհանգիստ էր, նա երբէք այդ տեսիլքանին չէր խոստովանել իր տառապութիւնը, ինչպէս այժմ։

Ամբողջ բազմութիւնը նրան թւում էր մի զարհուրելի հրէշ, որ պատրաստ է կլանելու իրան և իր քոյրերին։

Միջնակը—Թէոդորան ոչ մի բանից չէր վախենում։ Հպարտ հայեացքները, որ նա նետում էր լարուած ամբոխի վրայ, խիստ կերպով հակառակում էին նրա ողբմութիւն աղերսող դիրքին։ Նրա անկոտրում, հպարտ հայեացքում կար ատելութեան և արհամարհանքի արտայայտութիւն։ Թւում էր թէ փոքրիկ Թէոդորայի մանկական զգացմունքները նախապատրաստում էին վրէժ այդ հսկայի դէմ, որի առաջ նա ստիպուած է ստորանալ։

Ընդհանրութեան անտեսանելի այդ երեք աղջիկները, սակայն լաւ տեսանելի էին պարտիայի դէսպատր ներկայացուցիչներին, որովհետև նրանք աւելի մօտ էին նստած կենդրոնին, ուր բնկած էին ծնկաչոք դժբախտները։ Կանանչների և Կապոյտների պարագլուխները աղջիկներին լաւ դիտեցին։ Ազնիւ Թէոկրիտը ակնդարդ ծիրանագոյն վերարկուն հագած և թանկագին քարերով շքեղ զարդարուած, նախագահում էր կանաչների առաջին օթեակում։

Հակառակ բանակի կառավարիչների մէջ, որոնք մեծաւ մասամբ նմանում էին Թէոկրիտին, աչքի էր ընկնում մի գեղեցկատես երիտասարդ, նուրբ պէմքով, որն իր քնքշութեամբ և գեղեցկութեամբ աւելի նման էր կնոջ, քան թէ տղամարդու։ Դա կայսեր աղգականը—Իպպարխն էր, մի շատ հարուստ երիտասարդ, որ շռայլում էր իր փողերը զարմանալի

*) Տես Տարազ № 4.

անսասլբելութեամբ: Նա շարունակ շրջապատուած էր լինում զինուրականներով և շողոքորթներով, որոնք միջնորդներ էին շատ մութ գործերի:

Հասարակութեան մէջ խօսում էին, իբրև թէ Խպպարխը ահագին գումարներ է շռայլում մի արուեստով կնոջ համար՝ Ջօյա անունով,—կատարելով նրա բոլոր խնդիրքները:

Թէօկրիտը շողոքորթ է, կեղծ բարեպաշտ, ժլատ. որպէս պալատական՝ շողոքորթում է կայսերը և մինիստրներին, համարեա թէ մինչև երկինք բարձրացնելով նրանց կուրծպրութիւնները:

Խպպարխը—ընդհակառակը, անկեղծ է, ուղղամիտ, ազնիւ, ազատ մտածող, աներկիւղ պալատականում է կառավարութեան կարգադրութիւնները, եթէ նրանք իր կարծիքով վնասակար էին ժողովրդի համար: Նա շարունակ պաշտպանում էր ինքնավարութեան դաղափարը:

Եւ որովհետև պլեբեյների մէջ չափազանց խիստ թշնամութիւն կար, ուստի Կանաչները և Կապոյտները շարունակ կռիւ էին մղում միմեանց դէմ: Նրանց ընդհարումները անպակաս էին ամեն բանի մէջ էլ, հասարակ մէջ, քաղաքականութեան մէջ, կենցաղավարութեան մէջ, արհեստի մէջ, մինչև իսկ հագուստի մէջ: Շրնայելով, որ արուեստ լաւ յարաբերութեան մէջ էին, այնուամենայնիւ Կապոյտները հակառակում էին այն ամեն բանին, ինչ որ քարոզում էին Կանաչները:

Եթէ վերջիններս անհրաժեշտ էին համարում հոմէական եկեղեցու հետ միանալը, այն ժամանակ առաջիններս ապացուցանում էին հակառակը. եթէ Կանաչները պաշտպանում էին պատերազմի հարցը, Կապոյտները ընդհակառակը, քարոզում էին խաղաղութիւն: Մէկը կրում էր լայն ձեռնոցներ, իսկ միւսը՝ նեղ: Եթէ մէկը ճաշահարում էր արտաուհոն, միւսը անպատճառ սուրում էր և այլն, և այլն: Առհասարակ այդ երկու բանակների մէջ անհաշտ տեղութիւնն էր միշտ թագաւորում, ինչպէս լուրջ հարցերում, նոյնպէս և մանրակրկիտ խնդիրներում:

Ադնիւ Թէօկրիտը, նկատելով ծնկաչոք խմբին, ուղարկեց հարցնելու. ովքեր են նրանք և ինչ են կամենում:

Ուղարկած մարդը յայտնեց մեծ աղջկանը Թէօկրիտի հարցը:

—Մենք Ակաչիոյի աղջկերքն ենք.—պատասխանեց Կոմիտոնան, մօր պատէրը չիշելով.—նա նորելս մեռաւ, սակայն նրան յաջողուց Կանաչների ծառայութեան մէջ: Մենք և մեր մայրը մնացինք առանց մի կտոր հացի, առանց ապրուստի մի միջոցի: Մենք խնդրում ենք, որ մեր մօր նոր ամուսնուն տան միևնոյն պաշտօնը, կամ թէ մեզ օգնեն ուրիշ միջոցով:

Պատասխանը յայտնեցին Կանաչների պարագլխին: Թէօկրիտը մտաբերեց յանդուգն կնոջը, որ իրան անպատուել էր և խոյսն հրաման տուաւ հալածել խնդրողներին:

Միաժամանակ, Թէօկրիտի ուղարկած մարդու հետ, Կապոյտները ևս ուղարկեցին իրանց անդամներից մէկին լսմանալու, թէ ինչ են ցանկանում խընդրողները. Խպպարխը ևս ուտացաւ նոյն պատասխանը, ինչ որ ստացել էր իր հակառակորդը—Կանաչների պարագլուխը: Նա լսել էր նոյնպէս Թէօկրիտի ուրած կարգադրութեան մասին—հալածել աղջիկներին:

—Եթէ Կանաչները,—դուչեց Կապոյտների պարագլուխ Խպպարխը,—հալածում են իրանց ծառայութեան մէջ ապաստած մարդու դաւակներին, այնու ամենայնիւ Կապոյտները նրանց չըպէտք է թողնեն անօգնական: Մի վախենաք, երեխաներ, դուք անօթեւան չէք մնայ: Ձեր մասին կըհոգանք մենք: Եւ կէք մեր օթեւանները, դուք մեզ մօտ կըգտնէք օթեւան և օգնութիւն:

Աղջիկները չըսպասեցին, որ Հրաւէրը երկրորդ անդամ կրկնեն: Նրանք վեր կացան և Կապոյտների օթեւանը վազեցին:

Մինչ այս՝ մի քանի կառքեր ձի լծած՝ ասպարէզ մտան:

Խպպարխի խօսքերը հասարակութեան մէջ բարձրը ծափահարութիւն առաջացրեց, որը կարևիկրող էր այն ամենին, ինչ որ վեհանձնութեան նման է:

Ծափահարութեան հետևեց սուլոցը ազնիւ Թէօկրիտի հասցէին ուղղած: Նա թէև անտարբերութիւն արտայայտող նշան արեց, սակայն դէմքը շառագունեց սովորականից աւելի, իսկ շրթունքները այնպէս էր կրծում, որ քիչ էր մնում արիւն հոսէ: Դա արդէն ծառայում էր իրրև ապացոյց, որ հասարակութեան մեծամասնութեան նրա դէմ արտայայտած զայրոյթը Կանաչների պարագլխին ամենևին դուր չեկաւ:

Աղջիկներին տարան Խպպարխի օթեւանը: Նա և իր շրջապատողները վազաքշեցին վազքի պրեները և հանդստացրին: Երեխաները այդ վազաքշանքներին զանազան ձևով էին պատասխանում: Անաստասիան, երբեմն էր, բոլորովին հմայուած էր, Թէոդորան մտախոհ նայում էր դեղեցիկ երիտասարդին, որը նրանց վրրևալար հրեշտակը հանդիսացաւ: Միայն մեծը—Կոմիտոնան, արտայայտեց խօսքերով իր ուրախութիւնը և ջերմ կերպով յայտնեց իր վառ դոհունակութեան զգացմունքը:

Մրևնոյն երեկոյեան և եթէ ամբողջ քաղաքամասում տարածուեց ճակատագրի ուղարկած բախտաւորութեան մասին Ակաչիոյի աղջիկներին: Բոլոր նորութիւնների սիրահար կանայք գալիս էին Կոմիտոնի և իր քոյրերի մօտ, որոնք ամբողջ քաղաքի մէջ դառել էին հերոսուհիներ: Փուղպսլոն, կառապանի որդին, առաջուանից էլ աւելի սկսեց քաշ գալ Թէոդորայի ետևից: Բայց վազքրիկ խարերան միշտ էլ ծնծաղում էր իր կատակներ վրայ և վերջապէս տեսնելով, որ նա լուրջ է վերաբերում, ասաց.

—Գիտես ինչ կայ, սիրելի փուղպսլոս, աւելի լաւ կըլինի դու թողնես ինձ: Մենք միմեանց համար չենք նախատահմանուած: Մրևնոյն ժամանակ, սիրտք է ասեմ քեզ անկեղծաբար. ես ինձ համար արդէն ամուսին եմ ընտրել:

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ

III

Քեր պատմած անցքերից անցել են մի քանի տարիներ:

Դիշեր է: Բիւզանդիայի կայսեր Հոյակապ պալատը լուսաւորուած է կրակներով, որոնք հրդեհի նման անդրադառնում են Մարմարական ծովի խաղաղ ջրերում: *Ասորիների* հսկայական կամարների տակից անց ու դարձ են անում *զաւրիսականները:* Մեծ դահլիճում ժողովուել են սպասաւորները, ներքինիները ու վանականները խմբուել են միջին սեղանատան

պալատը լուսաւորուած էր կրակներով...

և հոյակերտ ապակեայ առաստաղներին կից սենեակում, ուր կատարեալ խաղաղութիւն էր թագաւորում և լոյսն ոչ մի շողք չէր երևում: Անատոլ կայսրը մեռնում էր: Նրա մահճակալի մօտ կանգնած էին Իպպարխ և Կլէօն եղբօրորդիները: Նրանք ուշադրութեամբ հետևում էին, որ շրջապատողները կայսեր վախճանը չըշտապեցնեն, հանդուգնաբար թագը խլելու նպատակով: Տիրապետ մի թագ, որը ձեռք են բերում ինտրիգներով և կորցնում են շնորհիւ պատահականութեան:

Եթէ մի թուացիկ հայեացք ձգենք լինենք Կոնստանդինից յետոյ բիւզանդական կայսրութեան պատմութեան վրայ, մենք կարող ենք գաղափար կազմել, թէ ինչպիսի բահակներ էին ձգտում իշխող հանգիստանալու այդ թագաւորութեան մէջ: Կոնստանդինի մահից յետոյ գահը ժառանգեցին իր երեք որդիները՝ Կոնստանդին, Կոնստանցիա և Կոնստանց: Հէնց սկզբից նրանք ատելած էին կուիս մղել իրանց հօրեղբայրների, նրանց որդիների և այլ ազգականների դէմ, որոնք աշխատում էին նրանցից խլել պահպանողութեան իրաւունքը: Այդ կուիները մանաւանդ աչքի էին ընկնում երկու հօրեղբօրորդիներ՝ Գալլ և Յուլիանոս: Երբ իշխանութիւնը երեք եղբայրների մէջ բաժանուեցաւ, Կոնստանցը ապստամբեց Կոնստանդինի դէմ, մի ճակատամարտում սպանեց նրան, իսկ յետոյ ինքն իրան էլ սպանեց: Այդպիսով մնաց միայն մի իշխող — Կոնստանցիան: Քիչ ժամանակից յետոյ Էուդէբիա ներքինին դաւադրութիւն կազմեց, որը պատրաստութիւն ունէր արմատախիլ անելու Կոնստանդիանոսի ամբողջ ցեղը, որպէս զի կարող լինի թագը տալ նրան, որին ինքը կընտրէ: Ներքինին մտադիր էր սպանել նոյնպէս կայսեր հօրեղբօրորդիներին — Գալլին և Յուլիանոսին, սակայն դաւադիրը կարողացաւ սպանել տալ միայն Գալլին, իսկ Յուլիանոսը փրկուեցաւ Էուգէբիա կայսրուհու եռանդուն ջանքերի շնորհիւ:

Կոնստանցի մահից յետոյ Յուլիանոսը ամբողջ կայսրութեան վրայ միահեծան իշխող դարձաւ: Նրա դէմ մի անհեթեթ մեղադրանք չկայացաւ. խիստ միջոցներով վերականգնել կուսակալների հին մեռած կրօնը: Դա մի չափազանց հնացած իդէա էր: Կուսակալութիւնը ընկել էր և վերակենդանացնել նրան, ի հարկէ, բոլորովին անկարելի էր:

Երբ Յուլիանոսը մեռաւ, մի ճակատամարտում սպանուելով, նրա հետ վերջացաւ Կոնստանդիանոս Մեծի հարստութիւնը: Կայսրութեան բարձրաստիճան անձինք սկսեցին թագի մասին տնօրէնութիւն անել և առաջարկեցին նրան Վալէնտինիանոս զօրավարին, որ վերջի ժամանակները իշխանութիւնը բաժանեց իր եղբայր Վալէնսի հետ: Այդ ժամանակ թագադրող եղբայրների մահից յետոյ գահ բարձրացաւ Գրացիան, հանդուգնեալ Վալէնտինի որդին, և իր հօրեղբօր նման, իրան օգնական վերցրեց իր ընկեր Թէոդոսին — իսպանական մի գնդապետի, որը Գրացիանի և նրա փոքր եղբօր մահից յետոյ միացրեց ամբողջ կայսրութիւնը իր իշխանութեան ներքոյ, վերջերը յանձնելով իր Արքադիոս և Գոնորիոս որդիներին:

Արքադիոս, արևելեան կայսրը, իր թագադրութեան ամբողջ ընթացքում, պատմաբանի խօսքերով, իր կնոջ Եւդոկիայի ձեռքում խաղալիք էր, իսկ նրանց որդին, Թէոդոս II-ը, նոյնպէս իր քրոջ Պուլքէրիայի ազդեցութեան էր ենթարկուած: Վերջինս վանք էր քաշել աւանդ հոգևոր կոչում կամ ձեռնադրութիւն ընդունելու, և եղբօր մահից յետոյ ամուսնացաւ Մարսիան զօրավարի հետ, իրրև օժիտ բերելով կայսերական թագը: Մարսիանի մահւամբ վերջացաւ Թէոդոսի հարստութիւնը և սկսեցին մի շարք անընդհատ ինտրիգներ և հեղաշրջութիւններ:

Լէոնի կայսր ընտրելուց յետոյ, Բիւզանդիայի արքունիքը դառել էր ամենակեղտոտ ապատների և չարագործութիւնների կենդրան: Արիաննան, որ Զէնոն կայսեր (Հոդով ու մարմնով մի տղեկ մարդու) կինն էր, մի որդի ծնեց, որի անունը լ սլատիս իր պապի, Լէօն II դրեց. այդ ժամանակ նա խընդրեց պապից՝ որպէս զի նա կայսերական պատուանշանները իր մահից յետոյ թոռանը կտակէ: Սակայն Լէօն II-ը դրան բախտ չունեցաւ արժանանալու. որովհետև նրան իր հարազատ հայրը թունաւորեց և ինքը կայսր դարձաւ:

Յետոյ խռովութիւն ծագեց Զէնոնի և իր զօքանչի՝ Վէրինայի մէջ: Վերջինս սիրահարուել էր իր փեսայի վրայ, և երբ սա մերժեց նրա սէրը, զօքանչը վճռեց վրէժխնդիր լինել և պատերազմ յարուցանել, նրան գահընկեց անելու դիտաւորութեամբ: Զէնոնը դրա առաջին լուրը առանալուն պէս, վախաւ Քաղկեդոնիա, իսկ այնտեղից էլ Ղրիմ—իր հետ յանշտակելով կայսերական զանձերը: Վէրինան, այդ դէպքից օգուտ քաղելով, թագադրեց իր հաղիւատակ եղբօրը, որը պատերազմների պատրաստին էր: Զէնոնը շուտով վերադարձաւ իր որդու հետ: Ամենքը թողեցին, հեռացան հաղիւատակից և նա իշխանութիւնից դրկուած փախաւ ու թագնուեցաւ Կիլիկեցու մէջ: Նրան խոստացել էին կենդանի թողնել, եթէ անձնատուր լինէր. և բանտարկեցին Սիստերնում, ուր և սպանուեցաւ: Դրա մասին Զէնոնը առում էր, որ չըղջաց իր տուած խոստմանը հաղիւատակին և արիւն չթափեց:

Վէրինան մեծ ջանք էր գործ դնում նորից գահակալութիւն կազմելու, բայց շուտով կալանաւորուեցին և բանտարկեցին: Արիաննան մեղադրում էր սպրալի խորհրդի համար պատասխան մի ծառայի—Անաստասի հետ. ուստի և մահուան դատապարտուեցաւ: Զէնոնը կարծում էր, որ այդ դատավճիռը իրագործուած է, երբ յանկարծ նրա առջև կանգնեց Արիաննան՝ գժոխքի չաստածուհու կերպարանքով: Զէնոնը ահաբեկուեցաւ և թոյլ տուաւ իր կնոջը ազատել տալ, նրան մահուան դատապարտող դատաւորին: Ապա յայտնեց Զէնոնին, որ պատասխան ծառայողներից մէկը իր գլխին կայսերական թագ է դրել: Ամենքը խմացան, որ այդ յանդուգնը ոչ այլ ոք էր, եթէ ոչ Անաստասը, որի մտերմական յարաբերութիւնը կայսրուհու հետ ոչ ոքի համար գաղտնիք չէր, բացի յիմար Զէնոնից: Այնուամենայնիւ կայսեր կտակածը ընկաւ մի այլ ծառայողի վրայ—Պէլպիա անունով, որին աքսորեցին Սերբիա և այնտեղ էլ խեղդամահ արին:

Արիաննան լմանալով այդ սպանութեան մասին, որը մեկ կողմից լրան էլ էր սպառնում, շտապեց վտանգի առաջն առնել սարսափելի ոճրագործութեամբ: Օգուտ քաղելով Զէնոն կայսեր հիւանդութիւնից, նա հրամայեց կենդանի թաղել նրան հէնց այն ժամանակ, երբ նա ուշագնացութեան մէջ էր: Ուշքի գալով, թշուառ Զէնոնը խլացրեց դամբարանի կամարները սիրտ պատառոտ գոչիւններով: Գաղտնական պահապանը լսեց այդ կոծի ձայնը, բայց չկամարձակուեց օգնել կենդանի թաղուած կայսերը: Յետոյ երբ բաց արին շիրիմը, տեսան որ Զէնոնը նախ քան մեռնելը՝ իր ձեռքերն է կըրծոտել:

Արիաննան, սպանելով ամուսնուն, ամեն միջոց ձեռք առաւ, որպէսզի գահի համար ընտրուի իր սիրելին: Սենատը նրա հաճութեամբ կայսր ընտրեց Անաստասին: Այսպիսով Արիաննայի սիրահարը Անաստասը գահ բարձրացաւ: Դա մի մարդ էր մեծ ծաղումով, զուրկ բոլոր արժանաւորութիւններից, իր բախտաւորութեան համար պարտական միայն պատահականին, որի վրայ ուշադրութիւն դարձրեց արքայական այդ անառակ կինը: Նշանաւոր է մի բան, որ Արիաննայի սիրահարը՝ բնաւրած կայսրը այլանդակ էր: Նրա մի աչքը սև էր, իսկ միւսը—կապոյտ: Նրա բնաւորութիւնը էլ ծայրայեղութիւն էր ներկայացնում: Նա երբեմն հաստատակամ էր և եռանդուն, երբեմն թոյլ և անվճռական, երբեմն շռայլ էր, իսկ երբեմն ծայրայեղ ժլատ, երբեմն քաղաքում էր կրօնի մէջ հաստատ լինել, իսկ երբեմն հետևում էր աղանդաւորներին: Ընդհանրապէս այս կայսեր թագաւորութիւնը ամենևին զոյն չունէր, նա չարժանացաւ պատմաբանի ոչ գովասանքին և ոչ էլ պախարակման: Եւ ահաւասիկ մենք նրան այժմ պատահում ենք արդէն ծերացած, հիւանդ, մահճի մէջ պառկած, որտեղից զուրկ նրան վիճակուած չէ այլևս բարբերին վեր կենալ: Կայսրը պառկած էր մեռաքսի թեթև վերմակի տակ և չընայելով դրան, նրա տաւաղող ղէմքից դարձեալ ոսկում էր քրտինքը: Հեռու պրսած ալէքսանդրեայ կանեթեղը ազօտ լոյսով լուսաւորում էր ննջարանը:

(Կըճարուճակի)

ԵՐԿԻՐԸ

Երկիրը լալիս է և ոչ ոք
Նրա ծայնը չի լսում,
Բիւրաւոր ղարերը մեծ ցաւ է
զգում՝ իր անտակ կրծքում:
Իսկ այդ մեծ ցաւը՝ անսահմանն
սէրն է ղէպի մարդկութիւնն,
Իսկ նրա լացը՝ վիշտը մարդկութեան եւ ողջ աշխարհի...
Լալիս է երկիրը, գոբնո՞ղ է ցաւը նրա խոր կրծքի,—
Այդպէս՝ խղճուկը չի կարող խօսել և լուռ չունի...

ՅՈՎՀ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

Այսպես կին

Ֆելիետօն

ՊԱՐՏԱՒՏԻՐԻ ՄԸ ՉԵՏ ՎԱՐԻԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

(Մոռացած էջեր)

Ծիծաղ.—Ի՞նչու այսօր տխուր ես, եղբայր Կայծակ։

Կայծակ.—Տխուր չեմ. ինքզինքս ծովը նետելու միտք ունիմ և կըխորհեմ, թէ ինչ կերպով նետեմ։

Ծիծաղ.—Առաջ գլուխդ թրջէ, փիւ մը ետքը մէկէն ի մէկ նետէ. շատ աղեկ է. արիւնը գլուխդ չի ցաւեցներ։

Կայծակ.—Թող ցաւին, որնէ հոգ, նետելէն ետքը նորէն ելլելու միտք չունիմ որ...

Ծիծաղ.—Ի՞նչու համար։

Կայծակ.—Շատ պարտքեր ունիմ և անկարող եմ վճարելու։

Ծիծաղ.—Ծով նետելով պիտի կրնաս վճարել։

Կայծակ.—Գոնէ մատանեղութենէ կըխլասեմ։

Ծիծաղ.—Մատանեղութենէ խլասելու համար ուրիշ միջոց չկայ։

Կայծակ.—Ի՞նչպէս։

Ծիծաղ.—Կեցի, սորվեցնեմ քեզի։ Երբ պարտատէրդ առաջին անգամ կուգայ ստակ ուզելու, կըպատասխանես իրեն թէ գալ շաբթուան մէջ չորեքշաբթի օրը քեզի տեսնէ և ստակն առնէ։

Կայծակ.—Չորեքշաբթի օրն ինչ ընեմ։

Ծիծաղ.—Սենեակէն ներս մտնելուն պէս՝ գլխուդ կըվիմաւորես, խահուէ կըհրամցնես և վերջ ներում կըխնդրես իրմէ՝ յայտնելով թէ նեղութենէն տալիր իրեն, և ետքը կըսես թէ քանի մը տեղերէ ստակ կըսպասես, թէ ինչը կրնայ երթալ, դուն անձամբ կըտանես իրեն։

Կայծակ.—Շատ լաւ։

Ծիծաղ.—Երբ երկրորդ օրը նորէն գայ ստակն ուզելու՝ գալմացումով իրեն կըսես. «Տղան չի բերած քեզի, ան Շուտարան. կարծեմ սխալմամբ ուրիշ տեղ տարած է, հոգ մի ընէր, ես կըհասկնամ գործը և վաղը կուտամ ձեր ստակը։ Կաղաչեմ, համեցէք վաղը հոս հանդիպելու»։

Կայծակ.—Երկրորդ օրն ինչ ընեմ։

Ծիծաղ.—Տունէն դուրս չես ելլեր։

Կայծակ.—Հետևեալ օրը։

Ծիծաղ.—Մէկուն տունը կերթաս և սեղանի վրայ այդ պարտատէրին կենացը երկարութեանը համար բաժակ կառաջարկես։

Կայծակ.—Վերջը։

Ծիծաղ.—Ձինքը տեսնելուդ պէս՝ կըսես. «Երէկ սենեակէն դուրս ելեր էք, ես մտեր եմ»։ Պարտատէրդ բարկութեան նշանները ցոյց կուտայ, այդ նշաններուն կարևորութիւն մի տար։

Կայծակ.—Ցոյց տալ միջոցներդ խրտչեցնէն աւելի դժուար են։

Ծիծաղ.—Յաջորդ անգամուն պէտ առ պէմ գալուդ պէս՝ կըհարցնես իրեն թէ գերմաներէն գիտէ՞ս, կամ անանկ լեզու մը կոր չի գիտեր. և երբ «չեմ գիտեր» լսէ, ցաւ կըզգաս իրեն յայտնելով թէ հարիւր ոսկի ամսական կարիրեն, եթէ գերմաներէն կամ իր չըգիտցած մէկ լեզուն գիտնար։

Կայծակ.—Լաւ։

Ծիծաղ.—Պարտատէրդ կըսկսի գոռալ, կանչել. դուն անտարբեր կըմնաս և պատիւ կըպահանջես իրմէն։ Այդ կըպոռայ, դուն պաղ արեամբ կըպատասխանես։ Քանի մը օր ետքը նամակ մը կըղրես իրեն սա իմաստով. «կըխնդրեմ որ դրաբերիս անպատճառ երեք ոսկի տալու շնորհ ընէք, շատ նեղութեան մէջ եմ, բարեկամութեան մէջ իրարու օգնել պէտք է։ Եթէ վրաղ չըմնես, բարեկամէ մը փոխ առ, քանի մը օրէն ամենը մէկէն կուտամ»։

Կայծակ.—Ասանկ նամակը կըղրկե՞։

Ծիծաղ.—Այո, այո, կըղրկե՞։ Վերջապէս՝ այս միջոցներով ժամանակ կըշահես և օր մը ստակ վաստկելուդ պէս բոլոր պարտքերդ մէկէն կուտաս։

Կայծակ.—Չնորհակալ եմ, բայց իմ ընելիք գործս չէ։

Ծիծաղ.—Ուրեմն գնա խղդուէ։

Բառարան.—Առանց յուսահատելու միջոցներ խորհելու և մեկ կողմեն դժբախտութեան վարժելու, եւ միւս կողմեն անկէ փրկելու համար։

† Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ

ՊԱՍԿԻԻԼ

Թանձր մառայը պատել էր մեր գրական հորիզոնին, երբ Թումբը իջաւ Պառնաս լերան կատարից և մտաւ մեր աշխարհը, ձեռքին բռնած ոսկէ գնարը։ Երկիւղ եմ քաշում, որ մի գուցէ Թումբ խօսքը ընդունէք իբրև գինու ռումբի, դրա համար էլ ես այստեղ գնում եմ այդ խօսքի եւրոպականը, որ կըլինի բոմբ։ Այդպէս էր Պառնասի զաւակի սրեագոնիմը։ Չէնց որ Թումբը աշխարհ եկաւ, իսկոյն ժողովի հրաւիրեց մի քանի գրագէտների և կարդաց բոլորի առաջ իր առաջին աշխատութիւնը։ Ընթերցանութիւնից յետոյ նա սրատարով սպասում էր գրական դատաւորների վճռին։ Եթէ ժողովականները հաւանէին գրածը և ամենքը միաբերան վճռէին նրա տպագրութեան տալը, Թումբը այլևս ոչ մի գարդ չէր ունենալ աշխարհիս երեսին։ Առաջին քայլն է միայն դժուար։ Եթէ առաջին քայլն արւեցաւ, այնուհետև գործը կընթանայ իր կարգով և Թումբը հետզհետէ կըհռչակուէր, իբրև բանաստեղծ։ Ա՛խ! երանի այն օրին, երբ կըտպագրւէր Թումբի առաջին գործը!

— Յարգելի պարոններ! ասաց Թումբը ժողովականներին, վայր դնելով գրածը սեղանին,— ես իմ սագը արդէն ածեցի և կախ տւեցի պատին, հիմա հերթը ձերն է։

— Իմ կարծիքով, առայ մի ծխող պարոն բերանից հանելով մխի մի ահագին քուլայ,— գրածդ շատ յաջող է, լեզուն և ոճը սահուն ու հարուստ. բայց...

Այստեղ պարոնը սկսեց աստիճ հազել և ստիպուած եղաւ մի քանի վայրկեան պատգա նշանակել Թումբի համար։ Եւ որովհետև այդ պատգան սկսւեց «բայց»-ով, դրա համար էլ հեղինակի սիրտը սկսեց տակն ու վրայ լինել։

—Բայց, շարունակեց պարոնը,— դուք, պարոն Թումբ, այդ գրածդով զուր դատապետում էք Օսկանեանին, որ իբր թէ նա կլանել է հասարակական վարերը։ Օսկանեանը այժմ էլ շարունակում է իր հանդիսանակութիւնները և ամենքս էլ լիասիրտ ենք, որ նա անշուշտ կըզրկէ ծաղրի դատապարտած փողը իր նպատակի վրայ և ժամանակին լրագրութեամբ հաշիւ կըտայ ընթերցող հասարակու-

թեան։ Եւ քանի որ դեռ ապացուցած չէ Օսկանեանի փողեր կլանելը, իմ կարծիքով այդ մի զրպարտութիւն կըլինէր ձեր կողմից, չարձակուել նրա վրայ և այդպիսի այլանդակ գոյներով նկարագրել նրան։ Օսկանեանը մինչև անգամ իրաւունք ունի մենամարտութեան հրաւիրել իր զրպարտողին...

Կարծես երկնքից մի տակառ սառը ջուր թափեցին Թումբի գլխին։ Նա իր ներքին յուզմունքը ծածկելու համար, աչքերը գցեց գետնին և սկսեց խաղալ իր կարճ մօրուքի թելերի հետ։ Տևրեց լռութիւն։ Պարոնի վերջին խօսքերը, որ Օսկանեանը մինչև անգամ իրաւունք ունի մենամարտութեան հրաւիրել իր զրպարտողին, այնպէս սարսափեցրին Պաւնասի հէգ զաւակին, որ, ինչպէս ասած է, քիչ էր մնում, մկան ծակը հազար թումանով առնէր։

—Ուրեմն չի կարելի տալ? ասաց Թումբը կամաց ձայնով։

Սակայն Թումբի վարդ յոյսերը դեռ բոլորովին չէին խորտակուել։

—Տեսնենք, մէս պարոնները ինչ կարծիք կըյայտնեն? Օրհնի այն բերանը, որի խորքերից կըլսուեն նպաստաւոր խօսքեր և որտեղից կըլսուի «տալ» բառը!!

—Այդպիսի բերանը, մտածում էր Թումբը,—ոչ թէ բերան կըկոչուի, այլ... սուրբ տաճար։

—Իսկ ես, սկսեց լսօսել մի հաստ ու պինդ պարոն,—կարծում եմ, որ այդ գրաւածքը կարելի է տալ, այն էլ փառաւոր կերպով...

Թումբի աչքերը վայելեցին ուրախութիւնից։ Չէնց այս էր նրա սուրբ տաճար փոխարինող բերանը։ Հաջան! Կեցցէ հաստուպինդ պարոնը!

—Եթէ պարոն Թումբի նկարագրած հասարակական աւազակի մէջ ինքը Օսկանեանն տեսնի իր իսկական պատկերը, շարունակեց հեղինակի մեցենասը,—ուրեմն ինչ հիման վրայ նա կարող է հեղինակին մեղադրել և նրան զրպարտող ճանաչել? Եւ մենք ինչու պիտի արդելենք պարոն Թումբին դառն ճշմարտութիւնը մերկացնելու և մտրակելու աւազակի անարգ վարմունքը? Իսկ եթէ Օսկանեանը իսկապէս ազնիւ է և բարեխղճ, ինչպէս կարող է նա իրան վերագրել հեղինակի ակնարկները?

—Մանաւանդ որ ես, շեշտեց Թումբը, սերտ առած,—ես փոխել եմ նրա ազգանունը՝ Օսկանեանի տեղ Մաթոսեան եմ դրել, փոխել եմ նրա արտաքին նկարագիրը՝ կրտած բեղերը ցախաւելի հետ եմ համեմատել, գանգրահեր գլուխը բոլորովին ճաղատ եմ դուրս բերել, կոճղի նման հաստ սրտանոյը տանձի կոթի հետ եմ համեմատել, քառասուն վեդրանոց տակառի մեծութեան փորը բոլորովին սղմել, կոյրել եմ նրա մէջքից. մինչև անգամ նրա որոտալից ձայնը վչացած հարմոնի տզզոցի հետ եմ համեմատել...

—Չէնց բանն էլ այդ է, ընդհատեց Թումբին մի շէկամօրուս պարոն,—հէնց բանն էլ այդ է, որ դուք Օսկանեանի արտաքինի հակապատկերն էք դուրս բերել։ Օսկանեանը գուցէ իր վրայ չընդունէր ոչ մի ակնարկ, եթէ որ դուք նկարագրէիք նրա արտաքինի ոչ իսկականը, ոչ էլ հակապատկերը։

—Այո, ուրեմն չի կարելի տալ, ասաց լինքն իրան Թումբը։

—Բայց դրանից մենք ամենքս էլ արդէն գիտենք, որ մեր փողերը Օսկանեանի մօտ է և ոչ ուրիշի մօտ։ Ամեն մէկը մեզանից, կարդալով այդ գրաւածքը, իսկոյն Օսկանեանին պիտի անւանի աւազակ...

—Ըհ! լեզուներդ պապանձուի! ասաց իր մտքում Թումբը։

—Պարոններ, ձայն տուէք մի ուրիշ մեցենասի,—արդէն մեր հասարակութեան մի մասը սկսել է տրտնջալ Օսկանեանի դանդաղկոտութեան վրայ. նրա այդ դանդաղկոտութիւնն արդէն կասկածանքի տուեր է դրել նրա վրայ։ Իսկ շատերն էլ պնդում են, որ նա այդ փողով իր համար մի գրավառատնոց է ուզում բանալ։ Ուրեմն ինչու չըպիտի ծեծել երկաթը, քանի որ նա տաք է? Սպասում է, որ բոլոր փողերը նա ուտի, մարսի և ջուրն էլ վրայից լսմի, ու յետոյ սկսենք նրան նախատել? Ինչու չըպիտի հէնց հիմիկուանից խփել նրա վզակոթին, որ պատառը կոկորդում մնայ ու հատամ լինի կերածը? Ինչ է, ուզում է, հարսանիքից յետոյ զուռնա ածել?

—Ես ձեր կարծիքի հետ բոլորովին համաձայն եմ, բացականչեց Թումբը և վճռեց գրաւածքը տալ տպագրութեան։

—Բայց... լսօսեց շէկամօրուսը։

—Դարձեալ «բայց», ասաց իր մրտքում Թումբը, չօնքերը կիտելով։

—Բայց այդ գրաւածքը պասկվի է, իսկ գրականութեան մէջ պասկվիներ չըպէտք է լինեն։ Եւ ես խորհուրդ չեմ տալիս պարոն Թումբին, որը դեռ նոր մօտեցել է գրականութեան շէմբին, առաջին անդամից ժառանգել պասկվիլանու անունը։

Այստեղ Թումբը ընկղմուեցաւ խորը մտածմունքի մէջ։ Նա այլևս չէր լսում դատաւորների և փաստաբանների ընդդիմախօսութիւնները։ Նա սարսափում էր մենամարտութիւնից, վախենում էր պասկվիլանու անունից, և մինչդեռ ժամանակ տեսնում էր փաստի, սակայն չէր կարողանում վճռել՝ տալ թէ չըտալ իր առաջին գրաւածքը? Իսկ քննադատների ասածներից ոչինչ չըհասկացաւ։ Ոմանք պաշտպանում էին գրաւածքը, իսկ ոմանք պասկվիլ էին համարում նրան։ Տալել, չըտալը այնքան մաշում էին խեղճ Թումբին, որ կատարեալ Համլետի to be or not to be դարձաւ։ Փողովականները հերթով սղմեցին Թումբի ձեռքը, բարի գիշեր մաղթելով նրան, դուրս եկան դահլիճից։ Պատշգամբի մի խուլ անկիւնում, այն հաստ ու պինդ մեցենասը, որ պնդում էր թէ պէտք է տալել, մօտեցաւ Թումբին և ասաց նրա ականջում.

—Ես ձեզ խորհուրդ կըտամ, որ դիմէք Սոխակեանին, որը N հանդիսի հրատարակիչն է (մինչդեռ ժամանակ իմքագիրը). ես կարդացել եմ նրա հանդիսում ձեր գրաւածքի նման շատ բաներ. նա ձեզ խորհուրդ կըտայ՝ տալել, թէ չըտալել։

—Չնորհակալ եմ, յատուկ շնորհակալ եմ, ասաց Թումբը։

Միւս օրը առաւօտեան Թումբը առաւ իր ստեղծագործութիւնը և շտապով դուրս գնաց տանից։ Նա այնքան շշկլուած էր, որ մինչև անգամ մոռացաւ կապելու իր փողպատը։ Լաւ է, որ ուրիշ բան չըմոռացաւ կապելու! Վնաս չունի, պործի մարդկանց ամեն բան ներելի է։ Թումբը սրատարով մտաւ Սոխակեանի տունը և նրա թողարտութեամբ (այսինքն՝ ոչ թէ տան թողատրութեամբ, այլ Սոխակեանի) սկսեց կարդալ իր պասկվիլը։ Չէնց որ հակատագրական ընթերցանութիւնը վերջացաւ, իսկոյն Սոխակեանը իր խռպոտ ձայնով բացագանչեց։

—Բրաւիսիմօ! Տալել!

Այդ խուզող բացագանչութիւնը Ռումբի համար այնքան քաղցր էր և անուշ, որ կարծես սոխակի գեղգեղանք լինէր։ Պասկիլը անմիջապէս տպարերեաւ N հանդիսում։

Սոխակեանի համակրողների մի սուար խումբ եկաւ Ռումբի մօտ, չնորհաւորելց նրա գրական ասպարէզը մտնելը և երկու հատ Ղարայեազի ահագին ձմերուկներ նվիրեց։

Մ ո ւ մ ռ ս ս

Պ ա ր ց ա կ ա ն

Մեծ Իշխանուհի Կաթհիա Ալեքսանդրովնաի քսաքսիս երկու օրվորդաց գիմնազիաները՝ Օլգա Ֆէօդորովնայի, աւել է իր հովանաւորութեան ներքոյ։

—

Ն. Չ. Գորճակալութիւնը յունուարի 28-ից Պետերբուրգից հեռագրում է. «Թիֆլիզից հեռագրում են, որ յունուարի 23—24 Թիֆլիսում վաւերեցին մի քանի դպրոցներ, գլխաւորապէս օրիորդաց, որոնք պատկանում են հայ-լուսաւորչական եկեղեցիներին կից։ Այդ դպրոցները չեն համաձայնում համապատասխան 1884 թ. փետրուարի 16-ի հարձրագոյն հաստատած կանոններին հայ-լուսաւորչական եկեղեցական դպրոցների մասին, որոնք գլխաւորապէս ձեռնարկ չեն պահպանում ձեռների մէջտեղներով։ Առաջարկել էր այդ դպրոցները յանձնել ժողովրդական լուսաւորութեան նախարարին, և դրա համար երկու անդամ ժամանակ միջոց էր նշանակուած, սակայն հայ-լուսաւորչական հոգևորականութիւնը գերազանց բոլորովին վաւել դպրոցները»։



գ ե ղ ա ր ւ ե ս տ

թատրոն, երաժշտութիւն

Ն Օ Ր Մ Ա

Օպերա 2 գործ. 5 պատկ. երաժշտ. Բելլինի



Նորման (Ինկլիա) գաղտուկ շաղկապուած է հռոմայեցի Պօլլիօնի (Սիկանչիակի) հետ։ Այդ հռոմայեցին Գալիատում հիւպատոս է։ Նա լսել է Նորմայի անդրդուելիութիւնը, սէրը, մեղք է գործել, զաւակներ էլ է ծնել տալ և այժմ սառել նրանից մի ուրիշ անմեղի, Ադալջիզին է (Աուրոչկինա Լիլինա) հեռամուտ լինում։ Նորման դրուիտների գլխաւորի Օրուեզօի (Օատրօվիդով) դուստրն է։ Նա սրտագամաւոս է, իսկ երիտասարդ Ադալջիզը քրմուհի է։ Վաւշտա հռոմայեցին խելքից հանում է Ադալջիզին, ժամանակ և տեղ է նշանակում նրան, որ վախցնի հետը Հռոմ։

Ադալջիզը իր անմեղ զգացումները խոստովանում է Նորմային, պատմում է այն քնքոյշ խոստումները, այն անհուն, անխարդախ սէրը, որ իր սիրահարը տալիս է նրան։ Նորման մի-հնոյն բառերը, նոյն խոստումները լսել է իր Պօլլիօնից։ Օրհնում է Նորման Ադալջիզին, ազատում է նրան իր ուխտից, թողնում կապել իր սիրեցեալի հետ և հեռանալ օտար աշխարհ։ Վերջը միայն նա հարցնում է Ադալջիզից՝ ով է իր սիրելին և հէնց այդ վայրկենին զէմ յանդիման է գալիս վաւշտա հռոմայեցին։ Այստեղից սկսւում է դրաման։

Բորբոքած սէր, նախանձ, ատելութիւն, վրէժ, պատիժ—ահա այն զգացումները, յարիբը, որոնցով պինւած Նորման պէտք է շանթահարի իր դաւաճան ամուսնուն։

Նա յանդիմանում է Պօլլիօնին, շանթահար է անում նրան իր խօսքերով, Ադալջիզին հրամայում է գնալ դաւաճանի հետ, սակայն վերջինս հրաժարւում է։ Նորման պնդում է իր պահանջը. մերթ նա մի քնքոյշ մայր է, և զաւակին աղերսում է Ադալջիզին, որ նա իր զաւակների հետ հարազատ սէյս լինի, խորհուրդ է տալիս, մերթ նա մի մարմնացեալ սոսկալի վրէժառուի տիպար է։

Վհատում է Նորման զաւակներին իր ձեռքով սպանել և իր անարգ ամուսնու ձեռքն չըմօղնել իր մանուկները։ Մտնում է ննջարանը, երբ մատղները քնքոյշ ընկղմած են Մորփէոսի գրկում, հանում է դաշոյնը, նրանց վրայ է յարձակւում, սակայն սթափւելով նա բղաւում է և այսպիսով զարթնեցնում մանուկները ապաւում են մահից։

Պահանջ է պատասխանատու Պօլլիօնը իրացիններով. այդպէս է յայտարարում պատգամաւորը։ Սակայն նա էլ աւելի հզօր կերպիս է կամենում վրէժ առնել նրանից։ Նա յայտարարում է, որ Ադալջիզին սիւաք է գցել խարոյկի մէջ։ Պօլլիօնը նրա ոտքի տակ գութ է հայցում, ազատում է իրան մեռցնել, բայց խնայել Ադալջիզին։

Վերջին վայրկենին, երբ ամենքը կազմ և պատրաստ սրտատրոփ սպասում են Նորմայի պատգամին, նա խոստովանում է իր յանցանքը հօրը, ազատում է խնայել զաւակներին, առնել թոռներին իր յարկի տակ, իսկ իրան մատնում է մահի։ Պօլլիօնը ուշ, շատ ուշ է հասկանում և ընդունում թէ լինչ էակ է եղել իր սիրուհին, լինչպէս ամուր կապերով նա շաղկապուած է եղել նրա հետ, բայց այժմ էլ ոչ մի հանդամանք անկարող կըլինին նրան,

այդ հաստատական կնոջ վհիսը փոխել։ Պոկում են Նօրմայի պլխից սլսակը և նրան տանում դէպի խարոյկ։

Տ. Ինկւիսս, այդ շնորհալի երջուհին իր բոլոր առաւելութիւններով հանդերձ՝ անկարող էր արտայայտել հոգեկան հզօր այն տանջանքը, կրակին, տեղութիւնն ու վրիժառութիւնը, որ պահանջւում են Նօրմայից։ Բայց անկեղծաբար ասած, նա վայելչականութեամբ կատարեց Նօրմայի դերը և նրա յաջողութեան յանկից էր Ատալջիզան-Կուրչկինա-Լիպինան։ Նօրման Թիֆլիսցիների սիրած օպերան է, վաղուց է չի ներկայացրել մեր բեմի վրայ, որովհետև Թիֆլիսցիները մեծ գմայլանքով են յիշում նախկին փառաւոր խոտալական օպերայի ներկայացումները և նրանից յետոյ մեծ հմտութիւն պէտք է ունենար արտիստը, որ զարթեցներ այդ փաղցր յիշողութիւնը Թիֆլիսի երաժշտասէր հասարակութեան մէջ։

Թատրոնը ծայրէ ի ծայր լիքն էր շատ ընտիր հասարակութիւնով։ Տ. Ինկւիստ ոտացաւ մի քանի ընծաներ, շատ անկեղծ ծափահարութիւններ և մի երկու դուէտ ս. Կուրչկինա-Լիպինայի հետ կրկնել տւաւ հասարակութիւնը։

Հետևեալ օրը օպերային խմբի կառավարիչ պ. Պօզդնիշեւի բենեֆիսն էր, ծաղկաքաղ մի քանի ընտիր օպերաններից։ Ներկայացման մասնակցում էին խմբի բոլոր անդամները, բայց ափսոս, որ հասարակութիւնն շատ չքկար թատրոնում։ Պ. Պօզդնիշեւն էլ մի երկու ընծայ ոտացաւ։

Չորեքշաբթի պ. Մայկնապ, հինգշաբթի պ. Միրիմանեանի, ուրբաթ ս. Կուրչկինա-Լիպինայի, շաբաթ բեժիսորի օգնական Ռէյսկու բենեֆիսներն էին։

Այսօր, կիրակի, օպերայի խմբի հրաժեշտի ներկայացումն է. մասնակցում են խմբի բոլոր անդամները.

—

Չորեքշաբթի, յունուարի 3-ին Թիֆ. ժողովարանում յատկապէս անդամների և նրանց ընտանիքների համար Զիլոտիի կոնցերտն էր։ Ժողովուրդ շատ քիչ կար, և այդ բնական է, քանի որ այդ ժողովարանի բոլոր անդամները, ամենչնչին բացառութեամբ, կազմում են հասարակութեան այն մասը, որոնց համար պեղարւեսսը՝ ամէնից չասենք՝ անհասկանալի և անըմբռնելի է։

Անշուշտ պ. Զիլոտիին էլ լաւ էր ճանաչել իր ունկնդիրներին, որ այնքան անփոյթ, այնքան անպատրաստ նւագեց մանաւանդ առաջին մասում, շարունակ խօսակցելով դաշնամուրից ոչ հեռու նստած իր ծանօթների հետ։

Այդ կոնցերտի սկիզբը նշանակւած էր ժամը 8½, իսկ սկսեցին մօտ 9½-ին։

—

Երեքշաբթի, յունուարի 30-ին հայ դերասանական ընկերութիւնը ներկայացրեց երկրորդ անգամ «Ղարաբաղի Աստղագէտը»։ Ներկայացումը թոյլ անցաւ, բացառութեամբ պ. պ. Տէր-Դաւթեանի և Վրոյրի։ Թատրոնը լիքն էր ձրի յաճախորդներով։

Իսկ ուրբաթի, փետրւարի 2-ին, վերջին ներկայացումն էր. խաղացին «Երանի երկրորդ» և «Պէպօի տկճոր»։ Ներկայացումը յաջող էր, թատրոնը լիքը։

—

Թիֆլիսում է գտնւում Զահի պալատական արտիստ Լորից, որ գնում-գալ փորձեր է անում, հիմք ունենալով հիպնօտիզմ, սպրիտիզմ։ Այդ պատճառը ամսոյս 1-ին երեկոյեան մեր խմբապրատոնը իր փորձերից մի քանիսը ցոյց տւաւ։ Նա ասում է մատճանդ խօսքը, դրբի մէջ գտնում է ընտրած բառդ, իր և ցանկացողների մարմնի մէջ խրում է ասեղներ, առանց ցաւ զգայնելու, ցոյց է տալիս կամեցածի մեռելի շաքը և այլն։

Հիպնօտիզմ, սպրետիզմ, բիշօպիզմ՝ սրանք մի պէտութիւն են հին հին դարերից մնացած, իրանց հետքը կորցրած, որոնք նորից յոյս աշխարհ են գալիս և մեծ չեղոխոտութիւն պէտք է անեն ապրի մեր կենցաղի մէջ։—

մեր պատկերները

ԱՒԹՈՒՆ ԿՈՒԿԵՏՈՒԹԻՒՆԸ

(Նկար Շլանգի, չփոտագ. Բաթումի)

Նայեցէք, որքան շքեղ է այդ պատկերը։ Տաղանդաւոր նկարիչը որ ոտիճան քնքշութեամբ գծագրել է փափկիկ մանկան, որ փափուկ պորպէ վրայ չորեքշաբթի տալով հասել է դէպի հայելին և նրա մէջ տեսել մի փնթուշիկ Լակ։ Նայեցէք, նայեցէք, մանուկը օդային համբոյրներ է ուղարկում իր նոր բարեկամին։ Նա իր փափկիկ ձեռները պարզել է դէպի նա, ձգտում է նրան հասնել, բռնել, գրկախառնւել նրա հետ, համբուրւել։ Սակայն պեռ այս աշխարհի դառնութիւնները չքաւսած՝ նա խոյսն կը հանդիպի կեանքի խոչընդոտին, նրա անարատ ձեռները կրկին կհասու հայելուն, նա ցաւ կզգայ, առանց հաճոյք ստանալու, նրա մեղրաթաթաթիս շրթունքը սառը հայելուն կդիպչին, առանց համբոյր տալու և առնելու իր բարեկամից։

Ահա իսկական կեանքը։ Ահա հաճոյք. երջանկութիւն և ահա դատն անչաղողութիւն ու խոչընդոտ, որ մեր աշխարհի ստեղծւածը անբաժան կեանքի մէջ ստոնում է։

պարահանդէսներ

Անցեալ շաբաթ, յունուարի 27-ին Թիֆլիսում Մեծ Իշխան Նիկոլայ Միխայլովիչն իր բնակարանում փայլուն պարահանդէս ունէր։ Ներկայ էր Թիֆլիսի ամենաընտիր հասարակութիւն։ Մեծ Իշխանի բնակարանը թէ ներսից և թէ փասադից պլեթական կերպով զարդարւած և լուսաւորւած էր։ Երեկոյթի կառավարչուհին Իշխան Նահանդապետ Զերբաշիձէի ամուսնուհին էր։ Թէ Մեծ Իշխանը և թէ Իշխանուհի կառավարչուհին մեծ սիրալիրութեամբ բոլոր հրաւիրեալներին յիշեցնել տւին այն քաղցրիկ խնճոյքները, որ Մեծ Իշխանի Օզոստափառ Ծնողները կուվկասում փոխարքութեան օրերում սարքում էին։

Պարերը ուրախ և զւարթ՝ կէս գիշերից շատ անց շարունակւում էին, որին մասնակից էր սիրալիր Օզոստափառ տան տէրը։

—

Փետրւարի 1-ին վրայ դրամատիկ ընկերութեան օպտին կայացաւ մի շքեղ պարահանդէս Թիֆ. ժողովարանում։ Գեղեցիկ տւալէտներ, Թիֆլիսի վայլուն գինւորականութիւն, քաղաքիս բարձրատիճան անձինք իրանց ընտանիքներով, գեղեցիկ զարդարած սրահները, երեք խումբ երաժշտութիւնն ուրախ ներդաշնակութիւն էին կազմում։

Ներկայ էին Մեծ Իշխան Նիկոլայ Միխայլովիչը, որ մասնակցում էր և պարերին, նոյնպէս երկրիս կառավարչապետն օգնական կոմս Տատիշչև և այլն և այլն։

—

Չաբաթ, փետրւարի 3-ին Թիֆ. ժողովարանում կայացաւ Սոլոլակի ձրի ճաշարանի օգտին կոնցերտ և ապա պարահանդէս։ Երեկոյթն անցաւ ցոյգ։ Մանրամասնութիւնները միւս անգամ։

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ

Անցեալ կիրակի, յունուարի 28-ին Բաղտում կայացաւ Մարդ. Ընկ. տարեկ ընդհ. ժողովը ընկ. Շինաֆեան մեծ դահլիճում. Ներկայ էին 60-ից աւելի անդամներ, նախագահում էր պ. Բ. Ղալուխանեան։ Ինքնեցին եւ հաստատեցին անցեալ տարւայ հաշիւները. ներկայ Քառասնի նախահաշիւը նոյնպէս ընդարձակ քննութեան եւ հաստատուց 6,200 ր. ծախք եւ այդքան էլ մնաց։

Ընկերութեան բարեյիշատակ նախագահ Սամուէլ Հաղիրեանի յիշատակը յարգեց ժողովը, ոտի կանգնած լսելով նախագահողից հանդուցեալի մահուան դոյժը։

Խորհրդի փոխ նախագահ պ. Աղէքսանդր Աբրիբէդեանը ընտրուց նախագահ խորհրդի, պ. պ. Տէր-Մարկոսեան հաշուապահ։

Մանր լուրեր

Մեր ազգայրդ բանաստեղծ պ. Ղ. Աղայեանը, որ երկու օր Թիֆլիսումն էր, ճանապարհ ընկաւ իր գիւղը — Բոլնիս-Խաչէն, ուր սկսելու է իր գրական գործունէութիւնը։ Պ. Աղայեան առողջ է, թէեւ մի փոքր նիհարած։

Մեր սիրելի բանաստեղծը մեծ ընտանիք ունի, հինգ աղջիկ եւ մի տղայ. զաւակներից ոչ մէկը դեռ ամուսնացած չէ եւ բոլորը իրանց հօր վաստակին են նայում։

—

«Daily News»-ի Կ. Պոլսի թղթակիցը հաստատում է, իբր թէ Ռուսիան աշխատում է բոլոր պետութիւնների համաձայնութիւնը ձեռք բերել Տաճկաստանը բաժանելու հետեւեալ ձեւով. Հայաստանը, Տաճկաստանի ասիական գաւառները մինչեւ Եփրատ գետ եւ Կ. Պոլիս՝ կանցնի Ռուսիային. Փրանսիան՝ կըստանայ Սիրիան, Պաղէստինը եւ Երուսաղէմը, Անգլիան՝ Եգիպտոսը, Պարսից Ծոցի արեւելեան ափերը. Աւստրիան՝ Սերբիան եւ Մակեդոնիան. Իտալիան՝ Տրիպոլիսը, Յունաստանը՝ Թեսալիան, Կրետէն եւ Եղէգեան Ծովի կղզիները։ Հաստատում են, որ բոլոր պետութիւնները մասին են ընդունելու այդ առաջարկութիւնը, բացի Աւստրիայից, որ մինչեւ հիմա դեռ պատասխան չի տուել։

Այս տեղեկութիւնը նոյնպէս հերքւեցաւ ռուսական պաշտօնական «Journ. de St. Péterbourg» թերթի կողմից։

—

Կ. Պոլսից հաղորդում են, որ սուլթանը դեսպաններին խնդրից տեղեկացնել, թէ նրանք ինչ կարծիքի են իսկապէս Զէյթունի ապստամբութեան պահանջի մասին, որ ցանկացում է Վիբանանի պէս մի երկիր դարձնել։

—

Ռ. Չ. Գ. հեռագրում է Կ. Պոլսից, թէ արդէն պետութիւնների հիւպատոսները հասել են Զէյթունի։ Զէյթունի ապստամբների հետ արդէն բանակցութիւնները սկսել են։

Վիէննայից նոյնը հեռագրում է, որ Զէյթունի հնազանդութեան բանակցութիւնները անյաջող են անցել, որովհետեւ երկու կողմն էլ մերժում են միւս կողմի պայմանները։ Տաճիկները պահանջում են, որ ապստամբները ձգեն զէնքերը, յանձնեն իրանց պարագլուխներին եւ վերաշինեն քարուքանդ արած զօրանոցները։ Զէյթունցիները պահանջում են, որ զինադադարի անեն նաեւ մուսուլմաններին. հաստատում են, որ իրանք պարագլուխներ չունեն եւ թէ զօրանոցները իրանք տաճիկներն են քանդել։ Ապստամբները պահանջում են նմանապէս, որ անցած վեց տարիները եւ հետեւեալ երեք տարիները զինուորների հարկից ազատ լինեն եւ գաւառապետը քրիստոնեաներից նշանակուի։ Հիւպատոսները կարծում են, թէ իրանց հրահանգները վերջացած է։

—

Յունուարի վերջերին, հեռագրում են Կ. Պոլսից «Times»-ին, Եւրոպական դեսպանները առանձին-առանձին պէտք է ներկայանան Ֆ. Պրան հայրենակ գաւառներում տեղի ունեցած կոտորածների եւ աւարառութիւնների հաշիւը, որ հիմնուած կըլինի հիւպատոսական զեկուցումների վրայ։

—

Անգլիական պարլամէնտի ներկայ նստաշրջանի գլխաւոր գործունէութիւնը լինելու են Հայաստանի, Տրանսւաալի, Վենեսուէլայի, Սիամի խնդիրները, ի միջի այլոց եւ ժողովրդային պաշտպանութիւնը եւ նաւատորմի ուժեղացնելը։

—

Կ. Պոլիս, 30 յունուարի—Հայոց Պատրիարքը բոլոր ներկայացրեց դեսպաններին գանգատւելով, որ բռնի կերպով հայերից ամբողջ խմբերով մահմեդականութիւն են ընդունել տալիս։

—

Կ. Պոլսից Ռ. Չ. Գ. յունուարի 30-ից հեռագրում է, որ Պուրը պատրաստ է կարգադրելու զէյթունցիների հետ գօրանոցների շինութեան եւ հարկերը չըտալու խնդիրը. նա յաժարութիւն յայտնեց նաեւ քրիստոնեաներից պատմագամ նշանակել եւ ապահովել Զէյթունում ապաստանած 6 հազար վախստականների անվտանգ հայրենիք վերադառնալը։

—

Նիւ-Եորկից հեռագրում են, որ ամերիկական եպիսկոպոսների ստորագրած հանրագիրը հայերի օգտին, ներկայացուած է Կլիվլէնդին եւ ուղարկուած է եւրոպական մի քանի վեհապետներին, ինչպէս նաեւ դերմանական եւ աւստրիական կայսրներին եւ Վենտորրիի արքեպիսկոպոսին։

—

«Köln. Zeif.»-ի Էրզրում մի թղթակցի ասելով՝ հայերից նշանակում են ժանդարմերիայի եւ ոստիկանութեան պաշտօնների մէջ։ Տաճիկները չեն հաւանում այդ նորութեանը, բայց պէտք է նկատել, որ պաշտօնների արժանացած հայերը իրենք լրտեսներ են ճանաչուած քրիստոնեաների կողմից։

Նոր կոտորածներ տեղի չեն ունենում իրը պատճառութիւն տուած վեց նահանգներում։ Սակայն կարօտութիւն եւ թշուառութիւն է տիրում ամեն տեղ։

—

Զէյթունում սկսել են բանակցութիւնները։ Բանակցութիւնը կարող է, հաղորդում է Ռ. Չ. Գործակալութիւնը, օգտակար լինել զէյթունցիներին։ Նրանց իրաւունքները յարգում են։ Այն պատերազմի մէջ, որ տեղի ունեցաւ զէյթունցիների եւ տաճիկ զօրքերի մէջ, վերջիններս մեծ կորուստ ունեցան։ Մարաշ վերադարձան մինչեւ 1,200 տաճիկ վիրաւորներ։

—

Ռ. Չ. Գործակալութիւնը յունուարի 26-ին հեռագրում է Լոնդոնից.—«Times» հեռագրում են Կ. Պոլսից, թէ Զէյթունի բնակիչները յայտնեցին հիւպատոսներին, որ իրանք կըտան

պատերազմական վիճակները, սակայն ցանկանում են ունենալ որսորդական հրոյանները։ Բացի սրանից նրանք պահանջում են նշանակել նահանգապետ և ուրիշ պաշտոնական անձինք քրիստոնեաներից։ Այն պահանջման՝ թէ պէտք է չանձնեն ապստամբութեան պարապուղներին, մերժողական պատասխան է ստացել։

—

«Times»-ի ասելով, Զէյթունի հայերը յայտնեցին եւրոպական պետութիւնների հիւպատոսներին, թէ այն դէպքում նրանք կըհաշտուեն տաճիկների հետ, երբ Զէյթունում քրիստոնեայ վոխարքայ կընշանակուի։

—

Էթէ հաւատանք Ռ. Հ. Պորձակալութեան, Կ. Պոլսից հեռագրում են փետրուարի 1-ից, որ Զէյթունի ապստամբների հետ բանակցութիւնները բարելաչող հեռանկարներ են ունեցել։

Խառն լուրեր

Հերքում է այն լուրը, իբր թէ վերջերս սուլթանը սահն է ընդունել անգլիական դեսպանին։ Այսքանը ճիշտ է, որ Կերբլին մրսել է, որովհետև երկար ժամանակ լսօսակցել է սուլթանի հետ։ Վերջինս անմիջապէս դուրս է եկել ընդունելու դեսպանին. նա հիւանդութիւնից նոր առողջացած լինելով՝ նորից մրսել է. բայց բնաւ դժգոհութիւն չի յայտնում այդ մասին։

—Տաճկաստանը մինչև անցեալ թվի օգոստոսը պարտք է ունեցել 1 միլիարդ 71 միլիոն րուբլի։ Սուլթանը մանակցութիւններ է սկսել Պարիզի և Բերլինի բանկիրներից կրկին 16 միլիոն ր. պարտք վերցնելու։

—«Times» ռուս-դաշնակցութեան մասին լսօսելով, հերքում է իր կողմից «Jour. de St. Petersp.»-ի հերքումը. նա տալել է նորից մի հեռագիր Կ. Պոլսից, որի մէջ ասւած է, իբր թէ մի քանի օր առաջ ռուսական դեսպանութեան առաջին թարգմանը կապնել է ռուս-տաճկական համաձայնութեան ծրագիրը։ Այդ ծրագիրը ներկայացրած է եղել սուլթանին, որը անբաւականութեամբ նկատել է, թէ երկու բարեկամների մէջ, այսինքն Ռուսիայի և Տաճկաստանի, դրաւոր պայմանները բոլորովին աւելորդ են։

—Կ. Պոլսում անգլիական և ռուսական դեսպանների մէջ դժգոհութիւն է ծագել։ Անգլիականը դեսպանը խիստ խօսքերով յանդիմանել է ռուսական դեսպանին, որ սա փոխանակ դեսպանների ընդհանուր խորհուրդների, դեկտեմբերում է իր սեպհական քաղաքականութեամբ։ Երբ ռուսական դեսպանը յայտնել է թէ ինչից է այդ դժգոհութիւնը, աւստրիական դեսպանը ասել է թէ երևի Կերբլին տաքի ունէր այդպէս վարելու։

—Սուլթանը իր ձեռքով մի նամակ է գրել անգլիական թագուհուն և դրանով հաստատել իր համակրանքները դէպի Անգլիան, բայց յաւ է յայտնում, որ անգլիական լրագրները անարդար կերպով են վարւում Տաճկաստանի վերաբերմութեամբ, դրգռելով դրանով մահմեդականների անբաւականութիւնը։ Սուլթանը յոյս է յայտնում, որ Անգլիայի և Տաճկաստանի մէջ կըվերանորոգուեն իրանց նախկին լաւ յարաբերութիւնները։

—Կ. Պոլսում սպասում են հրամանի Բարձրագոյն դատական պալատ հիմնելու մասին, պետութեան խաղաղութիւնը վրդովողների մասին խորհրդակցելու։ Այդ պալատի անդամները կլինեն՝ կայսերական խորհրդի նախագահ Սայիդ-փաշան, դատախազ Եանկոն (յոյն), Նուբեան Էֆէնդին և երկու տաճիկ իրաւաբանները։

—Վերջերս Բիրենեկում կոտորած իժգժութիւնների պատճառով, տեղի հայ ազգաբնակութեան՝ լուսաւորչական կաթոլիկ և բողոքական՝ կլօնական պետերը հեռագրով յայտնել են կայսր. պալատին, թէ իրանց հօտերը կամենում են իսլամութիւն ընդունել։

—Զէյթունի շրջակայքում տեղի ունեցած կոտորածներից ազատուած 300 հայ գեղհկուհիներ, վերին աստիճանի թշուառ դրութեան մէջ, հասել են Մարսէլ։ Դրանց ամուսինները Զէյթունն փախչելով, երևի լերդերից և վերջերից կոտորուել են։ Փաղաքի հայերը օգնութեան հասան այդ թշուառներին։

—Սուլթանը Սոլիմբրիրիի վերջին ճառից գոհ է։ Լոնդոնի տաճկաց դեսպանին պատւիրած է սուլթանի շնորհակալիքը յայտնել Սոլիմբրիրիին։

—Ֆրանսիական հիւպատոսը, որ գտնւում է Զէյթունի տաճկական գործքում, հաղորդում է, թէ նա Մարսէ ուղարկեց երեք իսպանական վիրանկիսկեանների և 57 կաթոլիկի, որոնք կրմնում էին Զէյթունում։ Տաճկական զօրքերը սաստիկ տանջում են ցրտից և վրկանքներից։

— Ֆրանսիան և Միացեալ-Նահանգները նոր պահանջներով պիմել են Գրանը։ Ֆրանսիական կառավարութիւնը պահանջում է վարձատրութիւն Վենի-Դիակլէնի վանքը կողոպտելու և Սալատորէ պատէրին սպանելու համար՝ վերջին անկարգութիւնների ժամանակ։ Միացեալ-Նահանգները պահանջում են մէկուկէս միլիոն փր. ոչ պակաս վարձատրութիւն այն վնասների փոխարէն, որ պատճառել են Խարբերդի և Մարաշի ամերիկական հպատակներին. բացի սրանից պահանջում են, որ Դուռը վերանորոգէ իր հաշւով նրանց բնակարանները։

—Նոյն իսկ անգլիական պահպանողական թերթերը գժգոհութիւն են յայտնում Սոլիսբիւրիի ճառի առիթով։ Գոտ լրագիրներ զարմանում են լորդի արարքից, որ մի քանի ամիս առաջ այնպէս խստութեամբ յարձակւում էր սուլթանի վրայ, իսկ այժմ իր ճառով նախկին ասածները ջնջում է և կարծես նրանցից հրաժարւում է։ Ամերիկական լրագիրները աւելի խրատութեամբ են վերաբերւում դէպի Սոլիսբիւրին, նրան համարելով անընդունակ քաղաքական գործիչ։ Գերմանական մամուլը գժգոհ է և քրննադատում է Սոլիսբիւրի ճառը։ Իսկ Իրլանդիայի յայտնի պատգամաւոր Ջոն Մորլէյը ճառ արտասանելով Սոլիսբիւրիի ճառի առիթով, անցնում է հայկական հարցին. նա պրեմիերի ճառում տեսնում է Անգլիայի վարկը բննած Տաճկաստանում և իրաւքանչիւր անգլիացու պատիւը ստորացած այնքան, որ հազիւ թէ մի անգլիացի համաձայնէր այդքան ստորանալ։

—Մարաշի մօտ վնասւած կաթոլիկների թիւը աւելի մեծ է քան լուսաւորչական հայերինը։ Հայերից շատերը ընդունել էին կաթոլիկութիւն ապահով լինելու համար, բայց դրանց յոյսերը ի դերև ելան։ Այժմ մի քանի հազար հայեր ընդունել են մահմեդականութիւն։

—Սուլթանը, ասում են, այժմ թոյլ է տալիս հայ-սրոյներ բաժանել Փոքր-Ասիայի վնասւածներին։ Եւրոպացիներից մէկը, որ օսմանեան պարտաւորեակներ ունի, մասն է հանել իր ունեցածից վնասւածներին և ուղարկել է օժանդակող Ֆոնդին։

Լոնդոն, փետրուարի 1-ին։ Թագուհու գահական ճառը այրի է բնկնում իր ծայրայեղ զգուշ տոնով։ Այնու ամենայնիւ հասարակութիւնը գտնում է որ միւս պետութեանց վերաբերեալ բարեկամական յարաբերութիւնների մասին խօսքերը հաստատ և վճռական չեն։ Այդ պատճառով ու այն պատճառով, որ գահական ճառն ակնարկում է թէ պետութիւնը պաշտպանելու համար պէտք է ծախքերն աւելացնել — անգլիական հասարակութեան վրայ սկսեց վրդովմունք տիրել։

—

Ուրքաթ, յունւարի 26-ին տպանւեայ առաջին կարգի վաճառական Ստ. Գէորգեանը։ Նրա ժառանգները որոշել են բարեգործական նպատակով 10,000 ռուբլի Նւիրել. այդ դումարի կէսը—5000ռ., այս ձեւով է յատկացրած. 1) Կովկասի Հայոց բարեգործական ընկերութեան—1000 ռուբլի. 2) Իջմիածնին—1000 ռ. 3) Թիֆլիսի Հայոց բարեգործական ընկերութեան—2000 ռ. 4) Բարեգործական ընկերութեան Երևանի ճիւղին—300 ռ.

5) Նուխիի ճիւղին—200 ռ. 6) Ռուսաց բարեգործական ընկերութեան—200 ռ. 7) „Նասլի“ ընկերութեան—200 ռ. 8) Գիշերային ապաստանարանին—200 ռ. 9) Սալոլակի ձրի հաւշարանին—200 ռ. 10) Երուսաղէմի վանքին—200 ռ. 11) Քահանաների ապահովութեան դրամարկղին—300 ռ. և 12) զանազան գիւղերի դպրոցներին և աղքատներին—1000 ռ.։ Իսկ 5000 ռուբլին ժառանգները չանձնելու են Կովկասի Հայոց բարեգործական ընկերութեան, մի գրական մրցանակ հաստատելու։

ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐՈՒ ՀԱՂՈՐԴԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Երթեւեկութիւն Թիֆլիս—Բաթումեան երկաթուղով ընդհատած է դեռ: Կայարանում յցած են ճանապարհորդները շատ օրեր անօթի մնալով: Պաշարներէն, հաց հասցնում են Թիֆլիսից եւ շրջակայքից մեծ ղժուարութիւններով: Կայարաններից հասնելորհան ճանապարհորդները հետագրով քաղաք են ուղարկում տեղիս ոտա լրագիրներին, նրանք գանգատում են երկաթուղու վարչութեան դանդաղ կարգադրութիւնների վրայ: Մի քանի տեղ ձիւնը երեք սաժէնաչափ, ասում են, կիտուել է:

Երկու օր է եղանակը բացուել է Թիֆլիսում եւ թէեւ անընդհատ հողմն փչում է, անշուշտ քամին մի քիչ դադարելուց յետոյ հնարաւորութիւն կըլինի ձիւնից մաքրել ճանապարհը եւ բանալ երկաթուղին երթեւեկութեան համար:

Գալով այն տպրանքներին, որոնք վաղուց են հասել Բագու, Աստուած գիտէ, թէ երբ նրանք կըտասցուեն Թիֆլիսում:

Մենք եւս Աղբիւր-Տարազի համար պատուիրած ունինք ընտիր թուղթ, որ վաղուց Բաթումում ընկած է: Ցնց այդ պատճառով Աղբիւրի № 1 տպագրութը ակամայ ուշացրինք, ենթադրելով, որ ճանապարհը գուցէ մինչեւ յունուարի վերջերը կըրացւի, սակայն տնքի տպասել անյարմար համարեցինք եւ Աղբիւրը լոյս ընծայեցինք Թիֆլիսում ձեռք բերած թղթի վրայ, ի հարկէ ընտրելով քաղաքում եղած ամենալաւը եւ յարմարը թուղթը:

Ռուսիայի 1896 թ. ժողովրդական տարեգրման համար սրոշած նախահաշիւը*)

Ներկայ թուականին որոշած է հետեւեալ ծախքերը (րուբլիներով) ժողովրդական տպրպայման սկէտքերի համար. Ս. Պետերպուրգի դործերի վերաբերեալ հոգեւոր դպրոցների համար 2,616,405 ր. (2,187,260). Գինուորական մինիստրութիւն. կրթական հատեխնիկական մասի համար 8,030,294 (8,181,157). Ծոմսյին մինիստրութիւն. կրթական մասի համար՝ 646,313 (611,378). Ֆինանսների մինիստրութիւն. պիտական մասի համար՝ 189,306 (150,301)։ Երկրագործական եւ կայսերական կալուածների մինիստրութիւն. պիտական, կրթական եւ օրինակելի հիմնարկութիւններ, լեռնային, գիւղատնտեսական եւ լեռնային մասերի համար՝ 1,734,282 (1,598,085). Ներքին գործերի մինիստրութիւն. կրթական մասի՝ 133,604։ Ժողովրդ. լուս. մինիստրութիւն. կենդրոնական կարգապահութեան՝ 295,133 (287,117). կրթական հրջանների կառավարչեան՝ 568,218 (564,706) համալսարանների—3,954,330 (3,792,392), դիմնազիաների, պրոդիմնազիաների, բէալական եւ արդիւնագործական եւ այլ միջնակարդ դպրոցների համար 8,588,992 (8,348,426), գաւառական, քաղաքային, ծխական, սկզբնական եւ ժողովրդական դպրոցների համար 4,118,502 (4,131,268). ուսուցչանոցների, հոգեւոր եւ ուրիշ դպրոցների 1,247,683 (1,444,004), պիտական եւ կրթական մասի համար վարձատրութիւն, պրոֆեսսորների եւ ուսուցիչների պատրաստութեան՝ 2,154,406 (2,002,134), որոշ ծախքերի 1,735,012 (1,063,214), այլ եւ այլ ծախքերի 762,880 (734,091). ընդհանուր ծախքն է ժողով. լուս. մինիստր. 24,863,061 (23,692,650)։ Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւն. ուսումնական մասի՝ 154,117. Իրաւաբանութեան մինիստրութիւն. իրաւագիտական կայսերական դպրոցների համար 226,093 (222,493), ընդամենը 41,593,425 (36,841,345)։ Ալսպիսով ժողովրդական զարգացման համար ծախքերը անցեալ տարւանից մեծացրած է 4,752,080 ր.։ Ընդհանուր ծախքերը (սովորական եւ արտակարդ) 1896 թ. հասնում են 1,361,547,994 րուբլու (1,214,378,030)։

Ընդհանուր մուտքերից եւ ծախքերից երեւում է, որ Մար ա Պայսրուհի անունով հիմնուած կրթական հիմնարկութիւնների համար, 1896 թ. որոշած է 5,520,520 (5,484,722) եւ ուսանողական տների պահպանութեան 2,323,095 (2,341,751)։ Ընդհանուր ծախքը՝ սովորական թէ արտակարդ, որ որոշած է 1896 թ., հասնում է 13,236,216 ր. (13,034,640)։

*) Փակագծում դրածները 95 թ. ծախքերն են. եթէ դրանք չըկան, նշանակում է այս տարի էլ միեւնոյնն է մնացել։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Թիֆլիս. Մշակին. *Իր ամբարտաւանութեան շնորհիւ Հոմը կործանուեց։ Ծառը որքան աւելի պտուղ է տալիս, նա այնքան աւելի է իր ճիւղերը խոնարհեցնում։ Իւրաքանչիւր զարգացած մարդու իդէալ Աստուած-Յիսուսը հեղ էր եւ խոնարհ։ Անսխալը միայն Աստուած է։ Ամեն չէ թոյլի տալ ուրիշների տակ սխալներ աւելորդ, անտեղի, եւ իր չըղիտցածի մասին մի խօսք ասել, բայց ամեն է այդ սխալը չըխոստովանել։*

Դուք հարց առաջարկեցիք, ինչ կապ կայ Աղբիւր-Տարազի եւ դեղեցիկ իրերի բազարի մէջ։ Չենք պատասխանեցինք։ Դուք պէտք է քաղաքացիական քաջութիւն ունենայիք կամ մեր ասածը հերքելու, կամ ներողութիւն խնդրելու, սակայն դուք, այն էլ այսօր, միմտութիւններ էք անում։ Տանելով ենք ասում՝ այդ Մշակին վայել չէ։

Ռուսչուկ. Գ. Դ. *Դրամը կարող էք ուղարկել Վիէն՝ Հանդէս Ամսօրեայի տպարանին. նրանց հետ մենք ընթացիկ հաշիւ ունինք։*

Ղզլար. Գեր. Եաբ. *Տարւայ ընթացքում երբ կամենաք՝ կարող էք ստանալ, եւ այն ժամանակն էլ կարող էք վճարել ճանապարհածախսը։*

Ա Ղ Բ Ի Ւ Ր

Լոյս է տեսել 96 թ. յունուարի պիրքը եւ ուղարկւել բոլոր բաժանորդներին։

Հովանաւորութիւն

Հին եւ նոր տարի (պատկեր)։ Նոր „Ալբիւրիճ“ (Նոր տարւայ առթիւ)—ոտանաւոր Ա. Խնկոյեանց. Շուտասիներ. Թարգմ. Արմենուհի։ Ձմեռ (ոտանաւոր) Յ. Կոստանեանց. *** (ոտանաւոր). Ֆ. Բալտեան։ Բէդլեհէմի մանուկը—ի. Մարկոսեանց։ Ծովագնացի պատմուածք (կըշարունակուի)։ Գլադստոն (պատկեր)—Պ. Զաքարեանց։ ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՒԵՍՏ.—Աստղերի աշխարհը (Թ. Բոյլ).—Գր. Բաղբեան։ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹԻՒՆ.—Կենդանիների կեանքից Ե. Թումչեան։ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ.—Ցնորուած գծեր Գլադստոնի կեանքից։ ՉԻՍՔՆԱԼԻՔ. Հանելուկներ, շուտասելուկներ, առածներ։ Խմբագրութիւնից։ Յայտարարութիւններ։

Խմբագիր-Հրատարակիչ՝
ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

Открыта подписка на 1896 годъ.
(ПОДПИСНОЙ ГОДЪ НАЧИНАЕТСЯ СЪ 15 НОЯБРЯ 1895 г.)
ИЗДАНІЯ ГОДЪ 2-й

„МУЗЫКА и ПѢНІЕ“

ежемѣсячный музыкальный журналъ для пѣнія, одноголоснаго и хороваго фортепіано и другихъ инструментовъ.

Журналъ „Музыка и Пѣніе“ выходитъ ежемѣсячно тетрадями до 40 страницъ большаго нотнаго формата и даетъ за самую умѣренную цѣну большое количество лучшихъ музыкальныхъ произведеній.

Годовой экземпляръ журнала „Музыка и Пѣніе“ составитъ около 500 стран. большаго нотнаго формата и даетъ своимъ подписчикамъ до 200 лучшихъ музыкальныхъ произведеній, по всѣмъ отраслямъ музыкальнаго творчества. Изданіе это при обширной программѣ, обнимающей все доступное въ современномъ музыкальномъ творчествѣ, даетъ своимъ подписчикамъ интересную, полезную въ воспитательномъ отношеніи, занимательную и разнообразную музыку, стараясь расширить кругъ музыкальныхъ званій, развлекая и поучая. Цѣль журнала „Музыка и Пѣніе“ быть полезнымъ и интереснымъ: 1) Каждому учебному заведенію; 2) Каждому желающему изучать музыку и пѣніе; 3) Любителю музыки, играющему на фортепіано, скрипкѣ, флейтѣ, концертино, віолончели, корнетѣ, гобоѣ, кларнетѣ, мондолинѣ и пр., 4) Любителю пѣнія, какъ сольнаго, такъ и хороваго; 5) любителю танцовальной музыки, который найдетъ въ немъ лучшіе танцы. Большой успѣхъ журнала, сочувственные отзывы и многія письма получаемые изъ провинціи говорятъ убѣдительно, что въ журналѣ этого рода есть потребность, что цѣль его намѣчена вѣрно, журналъ является во время и можетъ быть вполнѣ полезнымъ изданіемъ.

Успѣхъ выпавшій на долю „Музыка и Пѣніе“ за истекшій годъ и далеко превзошедшій скромныя ожиданія редакціи, даетъ ей силу и бодрость къ продолженію своего посильнаго служенія родинѣ въ удовлетвореніи насущной потребности русскаго общества имѣть за недорогую цѣну возможно полный, интересный и полезный музыкальный журналъ.

Въ Журналѣ „Музыка и Пѣніе“ будутъ помѣщаться выдающіеся новости исполняемыя въ концертахъ какъ въ Россіи такъ и заграницей.

Въ портфелѣ редакціи въ настоящее время имѣются новѣйшія произведенія слѣдующихъ знаменитыхъ композиторовъ: **Бера, Бома, Верди, Годара, Делиба, Ганна, Геншальса, Гуно, Изановича, Кафка, Купера, Ланге, Леонковало, Лакомба, Массе, Массенэ, Масканьи, Падеревскаго, Сенъ-Синса, Смита, Страуса, Фольштедта, Шабріэ, Шаминада, Ядасона, и др.**

Подписная цѣна на годъ безъ доставки 4 р. съ дост. и пересылкой 5 р. Допускается разсрочка на слѣдующихъ условіяхъ: при подпискѣ уплачивается 1 р. и затѣмъ уплачивается по 1 р. полученіи двухъ нумеровъ журнала до полной уплаты подписной суммы. Иногородные выславшіе при подпискѣ 1 р. уплачиваютъ 2-й рубль по полученіи № 1-го.

Казенныя учебныя заведенія, правительственныя и общественныя учрежденія всѣхъ вѣдомствъ, а равно и лица состоящія въ оныхъ на службѣ, могутъ получать журналъ въ кредитъ, заявивъ чрезъ свои канцеляріи.

Кромѣ того, желающіе изъ гг. подписчиковъ за добавочную плату **одинъ рубль** могутъ получить на выборъ одну изъ поименованныхъ ниже премій: Полныя оперы для фортепіано въ 2 руки:

Гуно: Фаустъ (225 стр.) Бизе: Кармэнъ (200 стр.) новыя изданія съ прибавленіемъ балетовъ. І. Байеръ: Волшебница Куколь, балетъ. Верди: Аида, Травіата, Трубадуръ, Фальстафъ, Риголетто. Г. Казаченко: Князь Серебряный. Масканьи: Сельская честь. Другъ Фрицъ. Леонковало: Паяцы, Г. Пуччини: Манонъ Леско. Целлеръ: Мартинъ Рудокопъ. А. Таска: Святая Лючія. Е. Вальдтейфель: Альбомъ танцевъ въ четыре руки. Гюнтенъ: Школа для фортепіано. Даммъ: Школа для фортепіано ч. I или II. Беріо: Школа для скрипки. Ганонъ: Этюды для фортепіано. Пѣсни. Гейне съ иллюстраціями Іоганна Грота, переводъ подъ редакціею П. Вейнберга. 104 рисунка къ поэмѣ Н. В. Гоголя „Мертвыя души“ рис. А. Агина, Гравировалъ Бернардскій.

Ноты напечатанныя въ № 1. стоятъ въ отдѣльныхъ изданіяхъ около 10 р.

Подписка принимается въ главной конторѣ: С.-Петербургъ, Садовая № 22, прот. гостинаго двора при книжномъ и музыкальн. магазинѣ П. К. Селиверстова (магазинъ высылаетъ всѣ книги и ноты, кѣмъ бы то нибыло изданныя); въ Москвѣ: Контора И. Нечковской, Петровскія линіи безъ доставки 4 р. 50 к., съ разсрочкою на 4 взноса. Въ Кіевѣ у В. Т. Кирѣева книжный магазинъ уг. Крещатика и Фундуклѣевской ул. и Кіоски. Въ Ростовѣ на Дону: Газетное Агентство и во всѣхъ книжныхъ и музыкальныхъ магазинахъ.

Подробныя объясненія, содержаніе перваго года изданія и начала мелодій высылаются безплатно.

Для любителей печается нѣсколько экземпляровъ журнала «Музыка и Пѣніе» на слоновой бумагѣ по двойной цѣнѣ.

Цѣна № 1-го въ отдѣльно продажѣ 50 к. съ перес. 69 к. съ нал. платежомъ 79. Части рубля можно марками.

Купившіе для ознакомленія № 1 при дальнѣйшей подпискѣ удерживаютъ изъ подписной суммы 33 к. т. е. стоимость нумера для гг. подписчиковъ.

3—3

Редакторъ-Издатель П. К. Селиверстовъ.

Дозв. ценз. Тифлисъ. 3 Февраля 1896 г. Типографія И. Мартиросіанца Орбел. ул., д. № 1—2.